ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի

ք.Երևան 06.07.2020թ.
ժ.10.00-ին

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Հանձնաժողովի անդամներ՝
Հանձնաժողովի քարտուղար՝

ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստի հետձգման մասին
(նախագահ)

Ընդունել ի գիտություն, որ

ա/ մասնակիցների կողմից ներկայացրած հայտերի և առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը հրավերով սահմանված ապրանքների նկարագրերին համապատասխանության գնահատման արդյունքում հանձնաժողովը արձանագրեց, որ.

«Լանար Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի համար ներկայացրած ապրանքը (անխափան սնուցման աղբյուրը՝ ԱՍԱ) համարժեք չէ պահանջված ԱՍԱ-ի հետ հետևյալ պարամետրերով.

1. Պահանջվել է 10կՎԱ/10կՎտ հզորությամբ ԱՍԱ՝ ներկայացվել է 15կՎԱ/13.5կՎտ,
2. Առաջարկվող ԱՍԱ-ի կուտակչային մարտկոցները ներկառուցված չեն և մատակարավում են առանձին,
3. Առաջարկվող ԱՍԱ-ն չունի ավտոմատ ինքնադիագնոստիկայի հնարավորություն, որի միջոցով ժամանակին հայտնաբերվում և փոխարինվում են վնասված կուտակչային մարտկոցները,
4. Պահանջված ԱՍԱ-ն ունի թվով 10 էլ. վարդակներ տարբեր սարքեր միացնելու համար, առաջարկվող ԱՍԱ-ի վրա դրանք առկա չեն
5. Մուտքային լարման տիրույթը՝ պահանջված ԱՍԱ-ի պարագայում 160-275Վ, իսկ առաջարկվածինը՝ 208-478Վ:
6. Պահանջված ԱՍԱ-ն հնարավորություն ունի նաև միացնելու հոսանքի գեներատորներին, իսկ առաջարկվող ԱՍԱ-ի պարագայում այդ հնարավորության մասին արտադրողի կողմից նշում առկա չէ:

«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 7-րդ չափաբաժնի համար ներկայացրած՝ էլեկտրաէներգիայի հոսանքափոխարկչի արտադրողը նշված է Bellnix ընկերությունը, սակայն ապրանքային մակնիշը չի համապատասխանում տվյալ արտադրողի մակնշմանը և հնարավոր չէ գնահատել առաջարկված և պահանջված հոսանքափոխարկիչների համարժեքությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովը, ձայների 5 կողմ, 0 դեմ, միաձայն որոշեց՝

Հրավերի 1-ին մասի 8.9 կետի պահանջներին համաձայն կասեցնել նիստը մեկ աշխատանքայի օրով և առաջարկել «Լանար Սերվիս» ՍՊԸ-ին և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հայտերի գնահատման նիստը հրավիրել ս.թ հուլիսի 8-ին, ժամը 10:00-ին:

Հանձնաժողովի Նախագահ՝ _____ *Ֆրեդիկ Բարսեղյան*

Անդամներ՝ _____ *Լևոն Ավետիսյան*

_____ *Հենրի Դերձակյան*

_____ *Սարգիս Բեյբուրթյան*

_____ *Քրիստինե Վարդանյան*

Քարտուղար _____ *Վարդան Հովհաննիսյան*